



CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITORING



Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ԹԻՎ ՀԿԴԴ/ՍՍԿԴ/ՍԴԴ/ՍԴԴ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՄԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՀԱՅՏԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*** Հայտարարությունը հրապարակվում է «Քրեական արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկման ծրագրի» շրջանակներում

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ՎՃՌԱԲԵՎ ԴՍՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-
Ի ԹԻՎ ՀԿԴ/0054/01/22 ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԱՐՏԱՀԱՅՏԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ գործող քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածով նախատեսված կաշառք տալու հանցակազմի առարկա կաշառքի չափերի մեկնաբանմանը, արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը և 3-րդ մասի 2-րդ կետը չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, բավարար չափով կանխատեսելի չեն, ուստի՝ չեն կարող անձին դատապարտելու հիմք լինել:

Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատն իր որոշմամբ, ըստ էության, փաստացի անվավեր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը և 3-րդ մասի 2-րդ կետը՝ նեղացնելով այդ մասով հանցավոր արարքների շրջանակը՝ «ապաքրեականացրել է» դրանք, այդպիսով իսկ ստեղծելով նախադրյալներ, որպեսզի խոշոր և առանձնապես խոշոր չափերով կաշառք տվող անձինք մեղավոր ճանաչվեն և պատժվեն ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասով, որն իրենից ենթադրում է անհամեմատ ավելի մեղմ պատիժ, քան այն դեպքերում, երբ անձը կդատապարտվեր ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (խոշոր չափերով կաշառք տալը) կամ 3-րդ մասի 2-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով կաշառք տալը):

Այս կապակցությամբ Կենտրոնն իր մտահոգությունն է հայտնում խնդրո առարկա որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի արտահայտած իրավական դիրքորոշման իրավաչափության վերաբերյալ այնքանով, որքանով պալատի կողմից արձանագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 3-րդ մասի 2-րդ կետի՝ Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված որոշակիության սկզբունքին անհամապատասխանություն այն պայմաններում, երբ օրենքների (այդ թվում՝ ՀՀ քրեական օրենսգրքի), Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ



իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը որոշելը Սահմանադրական դատարանի՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բացառիկ լիազորությունն է:

Ավելին, բոլոր այն դեպքերում, երբ դատարանները (այդ թվում՝ ՎՃՊԲԵԿ դատարանը) **հիմնավոր կասկած ունենան՝** կիրառման ենթակա որևէ նորմի սահմանադրականության վերաբերյալ, չունենալով նորմն **անվավեր ճանաչելու լիազորություն**, պարտավոր են նորմի **սահմանադրականության** հարցով դիմել **Սահմանադրական դատարան:**

Հակառակ մոտեցումը, եռաստիճան դատական համակարգի դատարանների կողմից նորմն **ինքնուրույնաբար (փաստացի) անվավեր ճանաչելը՝** Սահմանադրությանը հակասելու պատճառաբանությամբ, և, ըստ էության, առանց Սահմանադրական դատարանի դիմելու նորմի գործողությունը փաստացի դադարեցնելը, ոչ այլ ինչ է, քան սեփական լիազորությունների վերազանցում:

Ասվածը համահունչ է նաև Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներով արտահայտած **իրավական դիրքորոշումներին**, մասնավորապես՝ ՄԴՈ-1459 որոշմամբ Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ.

«(...)ընդհանուր իրավասության և մասնագիտացված (ոչ սահմանադրական) դատարանները կաշկանդված են **ոչ միայն Սահմանադրությամբ, այլև օրենքով՝** հակառակ դեպքում իրենք կարող են հանդես գալ կա՛մ որպես օրենսդիր, կա՛մ որպես սահմանադրական արդարադատության մարմիններ(...) ի տարբերություն **Սահմանադրական դատարանի**, որն արդարադատություն իրականացնելիս **ենթարկվում է միայն Սահմանադրությանը** (Սահմանադրության 167-րդ հոդվածի 2-րդ մաս), **մյուս բոլոր դատարանները կաշկանդված են ն՛ Սահմանադրությամբ, և՛ օրենքներով** (Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մաս), ուստի **օրենքն** այդ դատարանների կողմից կարող է ոչ թե վերացվել, անվավեր ճանաչվել, վերանայվել, այլ **միայն կիրառվել:** Ավելին՝ օրենքի պարտադիր պահանջները, այդ թվում՝ օրենքով սահմանված պարտադիր լիազորությունները, չեն կարող չկիրառվել, բացառությամբ այն միակ դեպքի, երբ դատարանը կասեցնում է վարույթը (ինչը, ի դեպ, նրա պարտականությունն է, եթե առկա



են սահմանադրականության վերաբերյալ հիմնավոր կասկածներ (Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մաս), և դիմում է Սահմանադրական դատարան:

Որևէ դատարանի՝ օրենքով սահմանված լիազորություններն իրավակիրառ պրակտիկայում փոփոխելը՝ դրանք ընդլայնելու ուղղությամբ՝ անկախ պատճառաբանությունից, անթույլատրելի է, իսկ նվազեցնելու ուղղությամբ նշանակում է դրանց չիրականացում կամ ոչ պատշաճ իրականացում, ինչը, կախված հանգամանքներից, կարող է նույնանալ արդարադատությունը մերժելու հետ:

Օրենքով սահմանված լիազորությունների՝ սեփական մեկնաբանությամբ ընդլայնման հակասությունը Սահմանադրությանն առավել ակնհայտ է դառնում Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասում Վճռաբեկ դատարանի համար սահմանված այն պահանջի տեսանկյունից, որ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն **օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում** վերանայելու միջոցով է իրականացնում իր սահմանադրական գործառույթները»:

Մեկ այլ՝ 2019 թվականի հունվարի 25-ի ՍԴԱՌ-7 աշխատակարգային որոշմամբ, Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ.

«Որպես Սահմանադրության գերակայության ապահովման միջոց՝ **Սահմանադրության վերջնական և համապարտադիր մեկնաբանությունն ու կիրառումն է** Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունը, իսկ հանրային իշխանության բոլոր մարմինները՝ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրենց լիազորությունների շրջանակներում մեկնաբանում և կիրառում են Սահմանադրությունը, (...) Թեև սահմանադրական արդարադատության իրականացումը, հատկապես նաև օրենքի և Սահմանադրության մեջ նշված այլ նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելը Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է, այնուամենայնիվ, սահմանադրականության ստուգումը բոլոր դատարանների պարտականությունն է:

Այսպես՝ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, եթե դատարաններն իրենց վարչություն գտնվող կոնկրետ գործով հանգում են կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության խնդրի, այսինքն՝ այդ կապակցությամբ առաջանում են հիմնավոր կասկածներ, և եթե տվյալ գործի լուծումը



հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով, ապա դատարանները **պարտավոր են** դիմել Սահմանադրական դատարան այդ ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով, ինչը նշանակում է, որ **բոլոր դատարանները, այլ ոչ միայն Վճռաբեկ դատարանը, պետք է ինցիդենտ կերպով ստուգեն կիրառվելիք նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը** և պարտավոր են դիմել Սահմանադրական դատարան՝ նշված նախադրյալների առկայության դեպքում»:

Վերոգրյալի լույսի ներքո կարելի է հստակ եզրահանգել, որ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը թիվ ՀԿԴ/0054/01/22 քրեական գործով իր առջև բարձրացված՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածով նախատեսված կաշառք տալու հանցակազմի առարկա կաշառքի չափերի մեկնաբանման հարցը լուծելիս դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից և իրեն վերապահել է Սահմանադրական դատարանի՝ Սահմանադրությամբ նախատեսված լիազորությունը:

Կենտրոնը լիահույս է, որ Վճռաբեկ դատարանը, Սահմանադրության 171-րդ հոդվածով նախատեսված իր լիազորությունների, այն է՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու և մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու ընթացքում, զերծ կմնա այնպիսի դիրքորոշումներ արտահայտելուց, որոնք ակնհայտորեն չեն բխում թե՛ Վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից, թե՛ ժողովրդավարական լեզվափոխությամբ օժտված օրենսդրի ուղիղ արտահայտած կամքից:

